96. ՏԵՐՏՐՈՋ ՀԵՔԻԱԹ

Կէղնի, չէղնի, ժամանակով տերտեր մե կէղնի։ Հաց թանկ կէղնի։

— Իրիցկի՛ն։

— Ի՞նչ է, տերտեր։

— Իրիցկին, կը տեսնաս, հաց թանկ է. միտք էրեր իմ էրթամ՝ ժողովք, համ ղգլուխսի կը պահիմ, համ բան մը լե ձեռքսի գընկնա, կը բերիմ զմեր ճժկըներ կը պահինք։

— Դե, դու դինաս, տերտեր,— կըսե իրիցկին,— իմալ օր խելքըդի կը կտրե։

Իրիցկին էրկու հաց կը դնե մըջ բոզչին, կը կապե տերտըրոջ մեջք, տերտեր զուր գավազան կառնե ձեռք ու գընկնա ճամպա։ Գեղեն արտապարզ մե թե էրկու կէրթա չէրթա, կը տեսնա, օր թեթև տըսնուհինգ տարեկան տղե մե գիկա կը հասնի տերտրոջ։

— Օռշնա ի տեր, տերտեր։

— Աստված օռշնե, որդի։

— Տերտեր, աստված հաջողե, ի՞նչ կէրթաս։

— Որդի, թանկ տարի է, պակասութենի տեր իմ, կէրթամ ժողովք էնիմ, հարի թանկութեն ի՛ընցնա, դառնամ ի գամ վըր իմ ճժկըներ։

— Տերտե՛ր,— կըսե տղեն,— զընձի չըս ա՞ռնի քու ձեռաց տակ, ես լե էթում տղա իմ, զիսի քըզի փոքրավոր, վըր քու ձեռաց խղմաթ կէնիմ, ժամանակ մե ապրինք, հարի թանկութեն ի՛ընցընա։

— Կառնիմ, ո՛րդի, ընձի զաթի փոքրավոր մե հարկավոր է։

— Տերտեր, էս ի՞նչ է կապուկ պառեկդի։

— Իրիցկին երկու հաց է դրի մըջ բողչին, էն է կապեր իմ պառեկսի։

— Հաց մը լե ընձի կա, դիր բողչի մեջ, ճամպեն կանոթնանք, կուտինք։

— Տո՛ւր, որդի։

Տերտեր կառնե զտղի հաց լե, կէղնի իրեք հաց, կը դնե մըջ բողչին, կը կապե ուր պառեկ։ Կէրթան։ Տղեն թեթևոտք կէղնի, յառեջ կէրթա, տերտեր զէնի կախ կը պահե, մեկ լե տղեն կը տեսնա, օր տերտեր ինչօր բան կուտե։ Ձեն չը հանե։ Կը հասնին պաղ աղբրի մե, կը նստին, օր հաց ուտին, տերտեր ղբողչեն կը պարղե, երկու հաց կը դնե վրեն։ Տղեն կը հարցու.

— Տերտեր, չէ՞ մենք իրեք հաց ունենք, յո՞ւր է մեկել հաց։

— Չէ՛, որդի, զաթան մենք երկու հաց ունենք։

— Տո՛, տերտեր, երկու հաց քումն էր, հաց մը լե ես տվի, չէղա՞վ իրեք հաց, չէղնի՞ զէն մեկ հաց կերեր իս։

— Չէ՛, կարգս վկա. զաթի էղած-չէղած երկու հաց էր։

— Տե՛րտեր, արի խոստովանի, օր զէն մեկ հաց դո՛ւ իս կերի։

— Չէ՛ մըզի երկու հաց էր։

Տղեն էլ ինչ մուր կերավ, լեզի կերավ, տերտեր չը խոստովանավ։ Գելնան գընկնան ճամպա, էս գեղ, էն գեղ, էս քաղաք, էն քաղաք, ճարելով-մուրալով կը հասնին, ըսինք, Տրապիզոնա քաղաք։ Կը նստին գամին, օր յընցնան, ըսինք, Ստամբոլա քաղաք։ Ճամպին ֆոթոնա մե կը պրծնա, օր, ալլա մաղաթ, երկինք ու գետինք կը կպին յիրար։ Տերտեր ահու կը կծկի, կը նստի մեկ դեն, կէնե օր զծովն իշկե, տղեն կը հրլոնդե ըզտերտեր, կիտա մըջ ծովուն։ Տերտեր կը սկի, քիչ մե կը մնա, ղմորուք կիտա դուս, տղեն հմա ձեռք կը թալե ղմորուք կը խաֆլե, կը բանձրցու վեր, կըսե.

— Տե՛րտեր, արի խոստովանի. զէն հաց ո՞ն կերավ։

Տերտեր սնգոտալով կըսե.

— Կա-ր-գը-ս վը-կա-է ես հաց չըմ կերերի։

Մեկ լե կը սրկըցու ու կը հանե։

— Տե՛րտեր, ղօղորդն ըսե, զհաց ո՞ն կերավ։

Տերտեր սնգոտալով մուքուր չիգա, էլման կը սրկըցու ու կը հանե, չարա չէղնի։

— Չէ օր չէ, ես խաբար չունիմ, ես զհաց չըմ կերերի։

Տղեն զտերտեր կը հանե դնե մըջ գամուն։ Կէրթան, կէրթան՝ կը հասնին Ստամբոլ, օթախ մե կը գտնան, մեջ կապրին։ Տերտեր

մուրալով, տղեն իրղտութենով օրական հացի փարա կը հանին ուրանց։ Կիրակի օր մե կէրթա բաղար, ձեն մը կը լսին, դալալ կը կանչե.

— Թագավորի մեկուճար տղեն ծանդր հիվանդ է, հար ո՛ն օր կռնա սաղցո՞ւ, թագավոր ընդրան խուրջի մե օսկի կիտա՞։

Տղեն կը մոտենա դալալին, կըսե.

— Ես զթագավորի տղին կաղեկցում, զիսի տար թագավորի մոտ։ Տղեն կառնե զտերտերն ու կէրթա թագավորի յառեջ կը կանին։

— Տղա՛,— կըսե թագավոր,— օղորգմա՞ն դու կռնաս զիմ տղեն աղեկցուս։

— Հա՛,— կըսե տղեն,— կռնամ, յորի՛ն չըմ կռնա։

— Օր չը կոցա՞ր։

— Օր չը կոցա՝ զիմ գլուխ զարկ։

Տղեն ու տերտեր մեկտեղ կը մտնան թագավորի յօղեն, տղեն ղթեեր կը քշտե, հիվընդի նամզ կիշկե, զոտ ու գլուխ կիշկե, ղանկաջ կը դնե տզի սրտին, հմա՞ օր կը տրըպա՛, զնջտրակ կը հանե ուր ծոցեն, զհիվընդի սիրտ կը ճղե, ինչ օր կտրելու է՝ կը կտրե, ինչ օր թալելու է՝ կը թալե, ինչ օր կտրելու է՝ կը կարե, դեղեր կը ցանե, մլհամ կը քսե, մուխ մե կիտա քթին, հիվանդ սրսըփալով գիմնա, կըսե.

— Օխե՞շ, ի՛նչ անուշ քներ ենք, յորի՞ն զիսի յիմցուցիք։

Տերտեր հըմա կը վազե դուս, մուժդա կը տանե թագավորին։ Թագավոր, թագուհին, վազիր ու նազիր քոմով գիկան կը տեսնան. օղորդմա՛ն, տղեն սրփ ու սաղ յելեր է նստեր է։ Կուրախնան, էլ արի տես ի՞նչ ուրախութեն, ի՞նչ դոլ ու զուռնա, ի՞նչ օղորմութեն, օր կիտան աղքըտներուն։ Տերտերին ու տղին լե խուրջիմ՝ օսկի կիտան, ճամպու կը դնին։ Տերտերն հմա ղխուրջին կը թալե վըր փիջին գընկնա տղի յառեջ տրկտրկալով դիկան ուրանց օթախ։ Տերտրոջ քեֆին քեֆ չըր հասնի. թաժա ջուրա առավ ուրին, կոնդրա կարել տվավ, Ստամբոլա տերտրներու պես կը զվոներ մըջ քաղքին, կուտեր, կը խմեր, քեֆ կէներ։

Ժամանակ մե էդ հմալ տերտերն ու տղեն կապրին մըջ Ստամբոլա։ Օրերուց օր մե էլման գացին բազար, լսեցին, օր դալալ բանձր ձենով կը բոռեր.

— Վազիրի տղեն ծանդր հիվա՞նդ է, հար ո՛ն օր կռնա աղեկցու, վազիր ընդրան էրկու խուրջի օսկի կիտա՞։

Տերտեր հմա կը ճիտկընա՝ խորոզլամիշ կէղնի, կէրթա դալալին կըսե.

— Ես զվազիրի տղեն կը սաղցում, ընձի տար վազիրի մոտ։

Տղեն կըսե.

— Տերտե՛ր, վա՛զն արի, չըս կոնա էդ բան էնի, կը մնաս մեջ, սորա զգլուխդ լե կիտաս դուս։ Ես չըմ խառվի, չըսիս՝ չըսե՞ց։

— Տո՛, օշնած, ինչ մեկ զոր բան է. ես չտեսա՞ դու թագավորի տղին ի՛մալ սաղցուցիր. էրկու խուրջի օսկի է, քիչ փարա չէ. ֆորի՞ն ձեռքե մե հանինք։

— Քու մեղք քու վիզ, ես չըմ խառվի, չըսիս՝ չըսե՞ց։

Տերտեր գնաց վազիրի ֆառջև կանավ։

— Հա՞, ի՞նչ մարդ իս, ֆո՛ւստեն իս,— հարցուց վազիր։

— Անատոլվա էրկրեն, ա՛ղա, տերտեր իմ։

— Է՞, դու հեքմութենեն բան կըհասկընա՞ս, կոնա՞ս զիմ տղեն աղեկցուս։

— Ֆորի՞ն չըմ կոնա, ի՞նչ զոր բան է, ես չըմ տե՞սերի հմալ բաներ։

— Տե՛ս, տերտեր, թե կոցար զիմ տղեն ազատեցիր, ըսերիմ, էրկու խուրջի օսկի կստանաս, թե չըկոցար՝ կը հանիմ կախարան։

— Վըր իմ աչից, խարուլ իմ։

Զտերտեր կը տանին հիվընդի մոտ, հըմա զթևեր կը քշտե, քու դանակ մե ծոցեն կը հանե, աջու կը կտրե, ձախու կը թալե, սիրտ կը կտրե, լեռթ ու թոք կը խառնե ֆիրար, հիվանդ, դու հիվանդ իս, ֆըսօր չըմեռեր է, իդա տաս տարի է, օր մեռեր է։ Տերտեր կը շիվրի, կը մնա։

— Յա՛,— կըսե,— էդ իմ աչք զիս խաբե՞ց, էդ ֆորի՞ն հմլա էղավ։

Ահու կը քաշվի, կը կծկի մեկ կողմ։ Կը մտնան, կը տեսնան, օր տղեն մեռեր է, էղեր է փետ։ Վազիր զոտքեր կը տփե գետին, հրամանք կէնե, փոլիս, կոմիսեր, զավթիա գիկան, զտերտեր կեցկին ֆառջև ուրանց, լանգով կը զարկին, թրով կը խտին ու հայդե՞ կը տանին կախարանի մոտ կը կանգրցուն. տղեն էդ տեղ կէղնի, կը տեսնա, օր չվան թալեցին տերտրոջ բոկ՝ կախեցին։ Տերտեր գազ մե զուր լեզուն կը թալե դուս։ Հըմա կը հասնի, զտերտեր կը բանձրցու, զչվան կը թուլցու, կըսե.

— Ազատե՛ք զտերտեր, մը՛ խեղդեք, ես զվազիրի տղեն կը սաղցում, թե սուտ էղավ իմ խոսք՝ զիս լե տերտրոջ հետ հանեք կախարան։ Թըղ զավթիա, փոլիս խաբար տանին վազիրին, տեսնանք ի՛նչ հրամանք կէնե։

Տղեն տերտրոջ անկաջնուվի կը փսփսա.

— Տերտե՛ր, զէն մեկ հաց դո՞ւ կերար, ըսե օր քըզի ազատիս։

— Չէ՛, կարգս վկա, ես հաց չըմ կերերի։

Տղեն ղչվան կը թորկե, տերտեր զլեզուն կը թալե դուս, կը լղլղցու։ Տղեն ղչվան կըթուլցու, լեզուն կը քաշվի ներս։

— Տե՛րտեր,— կըսե,— զհաց ո՞ն կերավ, խոստովանի, թե չէ կը թոզիմ կըխեղդվիս, ըշտե մահ քու գլխու վերև կանուկ է։

— Չէ, չէ, չէ, ես զհաց չըմ կերերի։

Վրա իրեքին տղեն էլման չվան կը ժրե ու կը թուլցու, տերտեր մուքուր չիգա, խուլասա՝ մարդիկ գիկան զտղեն կը տանին վազիրի մոտ, ղտերտեր լե կազատին կախարանից։

Տղեն կը մտնա հիվընդի մոտ, ինչօր տերտեր ավրեր էր՝ ինը կը շինե, ինչօր կտրելու էր՝ կը կտրե, ինչօր թալելու էր՝ կը թալե, մլհամ կը քսե, ծուխ կիտա քթին, մեռած տղեն կը սրսփա, գելնա կանի։ Վաղիր կուրախնա, էլ պատիվ ու փեշքեշ չը մնա, օր չէնե տղին ու տերտերին, էրկու խուրջի լե օսկի կիտա, տերտեր հմա կը վաղե զխուրջիք կը թալե վըր ուր թևերուն, տնկտնկալով կընգնա։ տղի յառեջ, գիկան տուն։

Շարաթ մե թե էրկու գընցնա, տղեն կըսե.

— Տերտեր, էլ յորի՞ն մնանք ղարիբութեն, փարա բոլ ունինք, դառնանք էրթանք մեր էրկիր։

— Էրթանք, որդի, էրթանք, օղորդ կըսիս, էրթանք հասնինք մեր տան ու տեղին։

Տերտեր կը շալկե զօսկիք, գելնան քաղքեն դուս։

Տերտեր կըսե.

— Էստեղ մեր ճամպեք կը ջոկվին իրարուց, դու հարաֆ կէրթաս, ես կէրթամ հուսուս, բեր զմեր փարեն փայ-բաժին էնինք։

Զօսկիք կը լցին գետնի վրեն, տղեն կառնե կէնե իրեք փայ։ Տերտեր կը զարմանա։

— Որդի՛,— կըսե տերտեր,— մենք էրկու հոգի ինք, յորի՞ն ղփարեն իրեք կուտոց էրիր։

— Տերտե՛ր,— կըսե տղեն,— իղա մեկ կուտոց քըզի, մեկ՝ ընձի, էս մեկ լե զէն հաց ուտողին։

— Վա՜յ, կարգս վկա, զէն հաց ե՛ս իմ կերի, էրկու կուտոցն լե ընձի կը հասնի,— որ կըսե, օսկիք յըմեն կը դառնան հող, տղեն լե կէղնի աներևութք հրեշտակ՝ գելնա էրկինք։